

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ
N 12/12

Քաղ. Երևան

23 մայիսի 2012թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաեւ բողոքարկման խորհուրդ) հետեւյալ կազմով՝ խորհրդի նախագահ Ա.Ֆ.Ազիզյան, անդամներ՝ Ա.Ա.Խաչիկյան, Ա.Ա.Տոնիկյան, Ա. Վ. Բաբայան, Ա.Գ. Շահինյան և Ա. Ի.Ղարիբջանյան (քարտուղար) իր 2012թ. մայիսի 23-ի նիստում (արձանագրություն N 4.1) քննարկեց «Դը Փրոքթեր ընդ Գեմբլ Քամփնի» ընկերության ներկայացուցիչ Ա. Գալոյանի կողմից 2012թ. ապրիլի 17-ին ներկայացված «PRODERMA» (հայտի համարը 20110465) համակցված ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Մերժման հիմք են հանդիսացել «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետերը և «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի 90-րդ մասի 3-րդ կետը, համաձայն որոնց որպես ապրանքային նշան գրանցման ենթակա չէ այն նիշը, որը չունի տարբերակիչ հատկություն և բացառապես բաղկացած է այնպիսի նշումներից, որոնք առևտրում ծառայում են ապրանքի ստեղծման նպատակը նշելու համար: Փորձաքննության ընթացքում պարզվել է, որ «PRODERMA» անվանումը, որը անգլերենից թարգմանաբար նշանակում է «PRO» - «ի օգուտ», «DERMA» - «մաշկ» օգտագործվում է ոչ թե ապրանքը մակնշելու համար, այլ որպես մաշկը խնայող միջոց, հետևավաբար ենթակա չի գրանցման:

Բողոքարկողը համաձայն չէ փորձաքննության որոշման հետ և ստորև բերված են հետևյալ փաստարկները՝ ի պաշտպանություն նշանի գրանցման:

Բողոքարկողը պնդում է, որ հայտարկված նշանը, իր գրաֆիկական կատարման շրջանակներում, իրենից ներկայացնում է մեկ բառ, որը առկա չէ իրեն հայտնի որևէ բառարանում, հետևաբար, մտացածին է՝ հանդիսանալով հայտատու-ընկերության ստեղծագործության արդյունք:

Նշում է, որ ուսումնասիրված բառարանային նյութերի համաձայն, “PRO” բառն անգլերենում ունի բավականին սահմանափակ կիրառում:

Այդպիսով, ըստ անգլերեն լեզվի հեղինակային բառարաններից մեկի՝ «Նոր մեծ անգլո-ռուսերեն բառարան»-ի, (ակադեմիկ Յու.Դ.Ապրեսյանի ընդհանուր ղեկավարությամբ) գոյություն ունեն տվյալ

տերմինի թարգմանության հետևյալ տարբերակները: Որպես առաջին, հիմնական, առավել կիրառվող նշանակություն բերվում է «professional» բառն իր կարճ ձևով՝ «պրոֆեսիոնալ, արհեստակցական»: Այնուհետև բողոքում բերված են հիշյալ բառի նշանակությունները:

Բողոքարկողը նշում է, որ նշված բառային միավորը բազմիմաստ է, ունի բազմաթիվ տարբեր նշանակություններ՝ բառերի տարբեր մասերի տեսքով, ինչպես նաև որպես հապավում: Ընդ որում, նշված նշանակությունների իմաստային շարքն իր մեջ ներառում է ընդհանուր խոսակցական բառապաշարի լեզվական միավորներ, ինչպես նաև տերմինաբանական լեզվական միավորներ, որոնք վերաբերում են տարբեր ոլորտներին:

Բողոքարկողը նշել է, որ սպառողի համար առավել հայտնի նշանակությունը տվյալ բառի առաջին ու հիմնական իմաստն է՝ «professional» - «պրոֆեսիոնալ, արհեստակցական», քանի որ ապրանքների մի մասի համար «PRO» և «professional» տերմիններն օգտագործվում են միասին կամ հենց ապրանքի վրա, կամ ապրանքների մարքեթինգային դիրքավորման դեպքում: Բացի այդ, գոյություն ունի նաև ապրանքների խումբ, որտեղ «PRO» տերմինն օգտագործվում է անվանման մեջ՝ անմիջապես փաթեթավորման վրա «փորձագետ, պրոֆեսիոնալ» տերմինների կիրառման հետ միասին («PRO» և «փորձագետ, պրոֆեսիոնալ» նշանների համատեղ կիրառումը հաստատող նյութեր, ինչը ևս սպառողի գիտակցության մեջ զուգակցվում է «պրոֆեսիոնալ» նշանակության հետ:

Ինչպես նշված է բողոքում, երկրորդ տարրը, որը հայտարկված նշանի կազմում է, դա «derma» անգլերեն բառն է: Բառարանային նյութերի համաձայն, «derma» բառն իրենից ներկայացնում է հատուկ տերմին, որն ունի հետևյալ նշանակությունները՝ «դերմա, մաշկ, կուտիս, կորիում» (Տվյալ տերմինը նաև ունի ռուսալեզու համարժեք բառը, որը, սակայն, ունի ավելի նեղ նշանակություն, քան անգլերեն համարժեքը՝ «դերմա, ըստ էության մաշկը, մարդու և ողնաշարավոր կենդանիների մաշկի միացնող-հյուսվածքային մասը՝ տեղակայված վերնամաշկի և ներքևում գտնվող օրգանների միջև, որոնց հետ դերման շատ թե քիչ շարժունությամբ կապված է՝ ենթամաշկային փխրուն միացնող հյուսվածքի միջոցով, որը հաճախ հարուստ է ճարպային կուտակվածքներով: Տվյալ տերմինոլոգիական միավորը չի կիրառվում որպես բառապաշարի ընդհանուր գործածական մասնիկ:

«Դերմա» տերմինը նաև բավականին հաճախ կիրառվում է որպես բարդ բառերի բաղադրիչ մաս և նշում է ինչ-որ բանի կապը դերմայի, մաշկի հետ որպես օրգան: Տերմինների մեծ մասը, որոնցում օգտագործվում է «դերմա» տարրը, օրինակ՝ դերմատոգլիֆիկա, դերմատոսկոպիա, շարքային սպառողին հայտնի չեն: Սակայն, հատուկ տերմիններում դրա օգտագործման արդյունքում, որոնք հայտնի են սպառողին (մաշկաբորբ, մաշկաբան), հիմնականում կարող է զուգակցել մաշկի, դերմայի՝ որպես մարդկային օրգանիզմի հետ՝ միանշանակ լատինական ծագում ունեցող, սպառողը, «դերմա» տարրը պարունակող նոր տերմինի հանդիպելիս՝ չորոշելով նշված տերմինների իմաստը: Նման

կապերը, որպես կանոն, բավականին աղոտ են, անորոշ, քանի որ նոր բառի նշանակությունը որոշելիս՝ սպառողն առաջին հերթին այն կհամեմատի ավելի վաղ իրեն հայտնի տերմինների նշանակության հետ, որոնք պարունակում են «դերմա» տարրը, ինչն ամբողջությամբ թույլ է տալիս ստեղծել որոշակի ասոցիատիվ կապեր:

Բողոքարկողը պնդում է, որ հայտարկված նշանը մտացածին է, որի բաղադրիչ մասերի իմաստային ոչ միարժեքությունը թույլ է տալիս մեկնաբանել դրա ըմբռնելի բովանդակությունը տարբեր ձևերով, ինչի հետևանքով նշված բառը չի կարող դիտարկվել որպես հայտարկված ապրանքների հատկանիշների նկարագրական բնութագիրը: Ընդ որում, սպառողի կողմից նշանը կազմող տարրերի առավել հավանական բացատրությունը ևս հիմքեր չի տալիս մտածելու համար, որ այն նշում է հայտարկված ապրանքների որոշակի ֆունկցիա:

Բացի այդ, հայտատուն նշում է նաև, որ ապրանքային նշանի նկարագրությունը որոշելու համար հարկավոր է հաշվի առնել նաև ապրանքների և ծառայությունների ցանկը, որոնց նկատմամբ նշանը ներկայացվել է գրանցման: Տվյալ դեպքում ապրանքային նշանը հայտարկված է գրանցման 3-րդ դասի ապրանքների հետևյալ ցանկի համար.

«Պատրաստուկներ լվացքի համար, պատրաստուկներ սպիտակեցման համար և կենցաղային այլ նյութեր. մաքրման, ողորկման, ճարպազերծման և հղկամշակման համար պատրաստուկներ. օճառներ, բացառությամբ անձնական օգտագործման համար նախատեսվածների. օդի և սպիտակեղենի թարմացման համար պատրաստուկներ»:

Բողոքարկողը պնդում է, որ հայտարկված նշանը, բաղկացուցիչ տարրերի բազմիմաստության, նշանում իրենց ինքնատիպ համակցության և սպառողի կողմից նշանի ընկալման ժամանակ դրա միանշանակ իմաստի բացակայության շնորհիվ, չի կարող վերագրվել նկարագրական նշաններին:

Բողոքարկողը պնդում է, հիմք ընդունելով ներկայացված փաստաթղթերը, համաձայն որոնց կարելի է եզրակացնել, որ հայտատու-ընկերության արտադրանքը մեծ հռչակ է վայելում Հայաստանի սպառողների շրջանում, այն սպառողների կողմից գնահատվում է որպես ապրանքային նշան, որը նշում է արտադրողին, այլ ոչ թե պիտակավորված ապրանքի նշանակությունը, այսինքն վկայում է լրացուցիչ տարբերակիչ հատկանիշի մասին:

Բողոքարկողը խնդրում է հայտ No. 20110465 “PRODERMA” ապրանքային նշանը գրանցել Հայաստանի Հանրապետության տարածքում 3-րդ դասի հայտարկված բոլոր ապրանքների համար:

Կոլտեգիայի անդամը, բողոքը ներկայացնելիս նշեց, որ 2012թ. ապրիլի 17-ին «Դը Փրոքթեր ընդ Գեմբլ Քամփնի» ընկերության ներկայացուցիչ Ա. Գալոյանի կողմից ներկայացվել է «PRODERMA» (հայտի համարը 20110465) համակցված ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոք:

Նշվեց, որ հիշյալ ապրանքային նշանի գրանցման մերժման հիմք են ծառայել «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետերը և «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի 90-րդ մասի 3-րդ կետը, համաձայն որոնց որպես ապրանքային նշան գրանցման ենթակա չէ այն նիշը, որը չունի տարբերակիչ հատկություն և բացառապես բաղկացած է այնպիսի նշումներից, որոնք առևտրում ծառայում են ապրանքի ստեղծման նպատակը նշելու համար: Փորձաքննության ընթացքում պարզվել է, որ «PRODERMA» անվանումը, որը անգլերենից թարգմանաբար նշանակում է «PRO» - «ի օգուտ», «DERMA» - «մաշկ» օգտագործվում է ոչ թե ապրանքը մակնշելու համար, այլ որպես մաշկը խնայող միջոց, հետևավաբար ենթակա չի գրանցման:

Կոլեգիայի անդամը համառոտ ներկայացրեց բողոքի բովանդակությունը, նշելով որ չնայած բողոքարկողը իր հիմնավորումների մեջ նշել է, որ PRODERMA բառը մտացածին է, և բողոքում բացատրել է դրա նշանակությունը, ինչպես նաև փորձել է ցույց տալ, որ հիշյալ նշանը հայտարկված է լվացքի, սպիտակեցնող պատրաստուկներ և այլ նյութեր կենցաղում օգտագործելու համար, մաքրման, ողորկման, ճարպագերծման և հղկամշակման համար պատրաստուկներ, օճառներ, ոչ անձնական օգտագործման համար, օդի և սպիտակեղենի թարմացման համար պատրաստուկներ ապրանքների համար, կապ չունեն մաշկի խնամքի հետ, սակայն կոլեգիան ճիշտ հակառակ կարծիքի էր:

Կոլեգիայի անդամ՝ Ա. Բաբայանը, նշեց, որ չնայած հայտարկված ապրանքային նշանը մերժվել է 3-րդ դասի ապրանքատեսակների համար, բայց միևնույն է, այս դեպքում էլ է բառը որակը բնութագրող հանդիսանում, որը նշանակում է, որ տվյալ ապրանքները ունեն մաշկը չփչացնող, չվնասող հատկություն:

Արդյունքում, կոլեգիան ներկայացրեց բողոքը մերժելու մասին առաջարկություն:

Բողոքում ներկայացված առարկություններով հանդես եկավ բողոքարկողը:

Ընդհանուր քննարկման արդյունքում բողոքարկման խորհուրդը որոշեց բողոքը մերժել:

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդ բողոքների եւ դիմումների ներկայացման եւ քննարկման կարգի» 68-րդ կետի 2-րդ բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

Մերժել «Դը Փրոքթեր Ընդ Գեմբլ Քամփնի» ընկերության բողոքը և «PRODERMA» (հայտի համարը 20110465) համակցված ապրանքային նշանի վերաբերյալ փորձաքննության որոշումը թողնել ուժի մեջ:

Բողոքարկման խորհրդի

նախագահ

Ա. Ազիզյան